**Արձանագրություն N 3**
**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 10 հունիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Բաղալյանը, Ս. Աբազյանը և Կ. Սարգսյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

**Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

Ջրային կոմիտեի կարիքների համար «Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման (2-րդ փուլ) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ն, գնահատող հանձնաժողովի 05.06.2026 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի որոշումը**

---

Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերը, ընթացակարգի մասնակցների հայտով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Մոդուլ» ՍՊԸ-ին:

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Մոդուլ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| նախագահ | _____ | Ա. Օհանյան |
| անդամներ | _____ | Է. Բադալյան |
| | _____ | Ս. Աբազյան |
| | _____ | Կ. Սարգսյան |
| Քարտուղար | _____ | Ս. Գալստյան |